ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 մայիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

60
(2910)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵ՞Տ ԹԵ՞ ՄՈՍԿՎԱՅԻ ՈՒՄԱՆՈՂ

Հիրավի, անհավանական կենսագրություններ են ունենում ՔՊ-ական «անկենսագրություն» պաշտոնյաները:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը պաշտոնավարմանը զուգահեռ նաեւ ուսանող է:

Ինչպես է կարողանում մարզպետի գերպատասխանատու աշխատանքը համատեղել ուսանողի կարգավիճակի հետ՝ հայտնի պետք է լինի միայն իրեն եւ իր ղեկավարին: Սարգսյանը 2016 թվականից առ այսօր ուսանում է ՌԴ ԲՈՒՀ-երից մեկում՝ Մոսկվայի մարզային իրավունքի կառավարման ինստիտուտում:

Առավել ուշագրավ է ուսանող մարզպետի «դաժան» վարքագիծը՝ 2024 թվականի հունվարին իր մոտ հերթագրված եւ ընդունելության արժանացած հպարտ քաղաքացիների նկատմամբ (տե՛ս փաստաթուղթը ArmLur.am կայքում):

13 հպարտների պրիմիտիվ հարցերը (աշխատանքի հարց, դրամական օգնություն) մարզպետը կամ մերժում է, կամ գցում «ընթացքի մեջ է» ռեժիմ:

Այսպես, օր օրի ներկա իշխանությունները խորտակում են հեղափոխության վերջին անուրջները, թե քաղաքացիները արժեք են. նրանք վաղուց դարձել են տուգանքի ու անարգանքի «մատերիալ»:

Ինչպես հայտնի է, երեկ ՔՊ-ն հերթական նախաձեռնող խմբի նիստն է արել՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Նիստի օրակարգում բացառապես կրթական ոլորտին առնչվող հարցեր են եղել, զեկույցներով են հանդես եկել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը: Ինչպես մեզ փոխանցեցին, նիստին հիմնականում ՔՊ-ի «երկնած» Ակադեմիական քաղաքի ստեղծման հարցերն են քննարկել: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ականները նիստին շատ ակտիվ են եղել, հերթով ելույթներ են ունեցել ու առաջարկներ ներկայացրել: ՔՊ-ականները Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ ջանք չեն խնայել՝ ցույց տալու, որ շատ ոգեւորված են Ակադեմիական քաղաքի գաղափարով ու վստահ են, որ այն իսկապես մեծ ու լուրջ գյուտ է լինելու կրթական ոլորտում. նրանք նաեւ շատ ջերմ են ընդունել նախարար Ժաննա Անդրեասյանին: «Քաղաքացիական պայմանագրի» նախաձեռնած նիստը բացառապես նվիրված է եղել կրթական ոլորտին, ու, չնայած որ, Տավուշում քանի օր է գերլարված վիճակ է՝ միեւնույնն է, այս կարեւորագույն հարցերը ՔՊ նիստի օրակարգում չեն քննարկվել:

Գործավարից մինչեւ նախարար գրեթե բոլոր ՔՊ-ականները «գերդաստաններով» պետական համակարգում են: «Ժողովուրդ» օրաթերթը «Ապագա կա՛» լոզունգի «ապացույցին» ականատես եղավ՝ ուսումնասիրելով պետական ինստիտուտները: Լուսանկարում Բագրատ Վարդանյանն է՝ ՔՊ-ի փորձագետը, եւ նրա կինը՝ ԱԺ գործավար Ինեսսա Շահնազարյանը: Այս ընտանիքում էլ, Հովիկ Աղազարյանի եւ իր կնոջ օրինակով, ամուսինները միասին մի հարկի տակ են աշխատում: Ըստ էության, 2018 թվականի հեղափոխությունը երկրին տվեց երկու բան՝ տարածքների կորուստ եւ ՔՊ-ականների զանգվածային բարեկեցություն:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Դատավորների ընդհանուր ժողովը, որը կայացել էր՝ ԲԴԽ անդամ ընտրելու, ընթացել է հանձնաժողովի նոր՝ կասկածելի անդամների պայմաններում ու դատավորների շրջանում խիստ մտահոգությունների տեղիք տվել: Բանն այն է՝ քվեարկության արդյունքները հաշվարկող հանձնաժողովի անդամները դատական համակարգից են լինում՝ ճանաչված, հեղինակություն վայելող դատավորներ, որոնք ողջ դատական համակարգի կողմից համարվում են որպես հանձնաժողովի սկզբունքային անդամներ. սակայն երեկ հանձնաժողովի հեղինակավոր դատավոր անդամները փոխարինվել են դատական համակարգի կողմից ճանաչում չունեցող դատավորներով: Արդյունքում՝ այս հանգամանքը կասկածների տեղիք է տվել, որ սկզբունքային անձանց նորերով փոխարինելը, միգուցե, նպատակ է ունեցել ներսում քվեարկության հաշվարկների վրա ազդել կամ, այսպես ասած, «թվեր նկարել»: Նշենք, որ ԲԴԽ անդամ ընտրվեց Արմեն Դանիելյանը: Դատավոր Արմեն Դանիելյանը հանրության մեջ աչքի ընկավ՝ ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանավորելով: Եվ, առհասարակ, Արմեն Դանիելյանը սովորություն ունի անկատար չթողնել որեւէ ՔՊ-ականի ցանկություն: Առանց անձի մասին լսած լինելու, նրա իրավունքն ապահովելու՝ մարդուն կալանավորելու պրակտիկան Արմեն Դանիելյանը շարունակեց կիրառել: «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը նրան ԱԺ ամբիոնից հիշեցրեց, թե ինչպես առանց իրեն լսելու կալանք իրականացրին: Արթուր Սարգսյանի վերաբերյալ կայացրած կալանքի որոշումն Արմեն Դանիելյանի համար դարձավ կարգապահական վարույթ հարուցելու թեմա, ԲԴԽ-ն, սակայն, 2022թ. մայիսի 12-ին, իհարկե, մերժեց Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Դանիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը: Սա էլ դեռ քիչ չէ, 2023 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մայիսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած քննարկմանը հաջորդած դատավորի ընտրությունը շառաչուն ապտակ էր քծնանքի ճամփան բռնած ուժային կառույցների եւ դատական իշխանության բոլոր ներկայացուցիչների համար: Դատավոր Արմեն Դանիելյանը, որ արդարադատությունը մերժելով, Նիկոլ Փաշինյանի իշխանության աչքին բարձրանալու համար վճիռներ էր կայացնում, ինքը մերժվեց ՔՊ-ի կողմից: Եվ դժվար է ասել, թե Նիկոլ Փաշինյանի նկարով ոգեշնչվող Կարեն Անդրեասյանն ինչպես կընդունի նրա՝ ԲԴԽ գնալը:

ԶՐՈՒՅՑ

«ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՀՈՂԵՐ ՉԵՆՔ ՏԱԼԻՍ»

Տավուշում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Գյուղացիները փողոց են դուրս եկել՝ թույլ չտալու հանձնել իրենց գյուղերը: Իշխանություններն էլ իրենց հերթին ոստիկանական ուժեր են կուտակել, որոնք սկզբում անհամաչափ ուժի կիրառմամբ բացեցին ճանապարհը, ապա տեղակայվեցին Կիրանց տանող ճանապարհի վրա, եւ մարդկանց թույլ չեն տալիս անցնել՝ սահմանափակելով նրանց տեղաշարժի իրավունքը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ ՔՊ պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան արդեն ավելի քան 10 օր է Տավուշում քաղաքացիները ճանապարհ են փակել ու պահանջում են կասեցնել այս գործընթացը: Իրենց հետ բերել են իրենց կադաստրի վկայականները՝ մտավախությամբ, որ սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի հետեւանքով իրենց տները, հողատարածքները եւ արոտավայրերը հնարավոր է՝ Ադրբեջանին անցնեն: Ըստ էության՝ Նիկոլ Փաշինյանն էլ իր ելույթում այս ամենը չի հերքում եւ նշում է, որ 4 գյուղը պետք է հանձնենք, հակառակ դեպքում պատերազմ կլինի:

-Մի՛ խեղաթյուրեք, չորս գյուղը, որի վերաբերյալ մեր հանրության շրջանում ապատեղեկատվություն են տարածում մանիպուլյացիայի արդյունք է: Սահմանազատում եւ սահմանագծում իրականացվում է հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, ինչը բացառապես արձանագրում է, որ ադրբեջանական մասը սահմանագծվում է դեպի Ադրբեջան, իսկ հայկական մասը սահմանագծվում է դեպի Հայաստանի Հանրապետություն: ՀՀ տարածքից ոչ մի սանտիմետր հող չի տրվում Ադրբեջանին, եւ դրանք սին տեղեկություններ են: Ես չեմ բացառում, որ այդ սահմանագծման հետեւանքով լինեն հարցեր, որոնց պետությունը պետք է պատշաճ արձագանքի: Ես չեմ բացառում, որ ինչ-որ հատված, որը Հայաստանի Հանրապետության անվտանգության եւ սուվերեն տարածքի ստեղծման ու զորքի հետքաշման համար տրվում է Ադրբեջանին՝ անհարմարություններ պատճառի մեր գյուղացիներին: Բայց միանշանակ ուզում եմ արձագանքել, որ պետությունն անելու է իրենից կախված ամեն բան, որ մեր գյուղացիները, բոլոր նրանք ովքեր ապրում են այդ սահմանին եւ անհանգստացած են, իրենց անհանգստությունը փարատվի եւ ճշմարտությունը հասու լինի բոլորին:

-Պարոն Հակոբյան, դուք էլ եք շեշտում, որ հնարավոր է անհարմարություններ լինեն քաղաքացիների համար. փաստորեն չե՞ք հերքում, որ նրանց ունեցվածքը կարող է մնալ ադրբեջանական կողմում:

-Ոչ:

-Այս դեպքում անհարմարություն ասելով ի՞նչ նկատի ունեք:

-Ես նշում եմ, որ ՀՀ տարածքից ոչ մի միլիմետր հող չի տրվելու Ադրբեջանին: Այս գործընթացը վերահսկվում է միջազգային կառույցների կողմից, եւ այսպիսով մենք գնում ենք դեպի խաղաղություն: Խաղաղությունը հենց սա է, երբ մենք կարողանում ենք սահմանը գծել եւ արդյունքում տեղի է ունենում սահմանի ճանաչում եւ այլեւս վիճելի ոչ մի հարց չի լինում: Ես չեմ բացառում, որ այս գործընթացի ընթացքում անհարմարություններ կլինեն, սակայն բացառում եմ, որ Հայաստանի Հանրապետությունից որեւէ սանտիմետր հող կտրվի:

-Պարոն Հակոբյան, Նիկոլ Փաշինյանն իր խոսքում բազմիցս նշել է, որ սահմանազատման դեպքում անգամ երաշխիք չկա, որ Ադրբեջանը սադրանքների չի գնա:

-Ես ուզում եմ նշել, որ այնտեղ, որտեղ իրականացվում է սահմանագծում այլեւս վիճելու բան չկա: Ադրբեջանը ճանաչում է ՀՀ սուվերեն տարածքը եւ մենք ճանաչում ենք փոխադարձաբար, եւ այստեղ վիճելու ոչինչ չկա: Սակայն մեկ այլ հարց է, որ սահմանազատումը պետք է իրականացնենք ՀՀ սահմանի ողջ երկայնքով, եւ փոխադարձաբար ճանաչենք միմյանց սահմանն ու վիճելի հարցեր չլինեն, ապա մեր անվտանգության երաշխիքները շատ ավելի կլինեն:

-Սեւ լճի հատվածում եւ մյուս տարածքներում, որտեղ Ադրբեջանն ապօրինի կերպով առաջ է եկել՝ սահմանագծում արվելո՞ւ է:

-Իհարկե:

-Եվ երաշխիք կա՞, որ Ադրբեջանը հետ է գնալու:

-Սահմանագծման եւ սահմանազատման արդյունքում ՀՀ սուվերեն տարածքում գտնվող վայրերում ադրբեջանցիները պարտավորվում են հետ գնալ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀԱՐՑԵՐԻՆ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր, դաշնակցական Իշխան Սաղաթելյանը սոցիալական ցանցի իր էջում անդրադարձել է ընդդիմությանն ուղղված մի շարք հարցերի. «Այս պահին արդիական մի քանի կարեւոր հարցերի պատասխաններ:

● Որտե՞ղ է ընդդիմությունը, ինչո՞ւ չի աջակցում Տավուշյան շարժմանը:

Ես կարող եմ խոսել ՀՅԴ-ի եւ «Հայաստան» խմբակցության անունից: Դաշնակցությունն իր կառույցով եւ բոլոր ռեսուրսներով առաջին իսկ օրվանից կանգնած է եղել Տավուշը հանուն հայրենիքի շարժման կողքին, ներկա է եղել Տավուշում եւ գործնական աջակցություն ցուցաբերել ձեւավորված Շարժմանը: Ողջ ընթացքում Տավուշում են եղել նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավորները: Այս թեմայով աշխատանքներ են իրականացվել նաեւ ԱԺ-ում եւ միջազգային հարթակներում:

● Ինչո՞ւ քաղաքական ուժերը չեն ստանձնում առաջնորդություն:

Տավուշում արդեն կա ձեւավորված Շարժում: Այն ունի բնականորեն ձեւավորված հստակ առաջնորդություն՝ ի դեմս Բագրատ Սրբազանի, ով անգնահատելի եւ պատմական առաքելության է իրականացնում:

● Ինչո՞ւ զուգահեռ այլ գործընթաց չի նախաձեռնվում:

Մենք այս պահին ճիշտ չենք համարում առանձին կամ զուգահեռ գործընթաց սկսել, քանի որ արդեն կա ձեւավորված հակազդեցության օջախ եւ մենք կարծում ենք, որ պետք է ամեն ինչով աջակցել այդ գործընթացին եւ այն դարձնել համահայաստանյան ու համահայկական:

● Ինչո՞ւ տարբեր ուժեր չեն միանում այս պայքարին:

Ինձ համար անհասկանալի են բոլոր այն ուժերը եւ անհատները, ովքեր տարբեր քաղաքական հաշվարկներով պայմանավորված անգործունեություն կամ պասիվություն են ցուցաբերում. կա սրբազան պայքար, պետք է կանգնել այդ պայքարի կողքին:

● Ինչո՞ւ հենց հիմա չի նախաձեռնվում իմպիչմենտի գործընթաց:

Այս պայքարի տրամաբանական ավարտը կարող է դառնալ ԱԺ-ում իմպիչմենտի գործընթացի նախաձեռնումը: Սակայն ժամանակից շուտ այդ գործընթացի նախաձեռնումը եւ այն երաշխավորված տապալման տանելը մենք անթույլատրելի ենք համարում: Մենք կգնանք այդ գործընթացին, երբ փողոցում կլինի անհրաժեշտ եւ բավարար ուժ ժողովրդի կամքը պարտադրելու համար: Ուստի առաջիկայում բոլորիս քայլերը պետք է ուղղված լինեն այդ ուժի կուտակմանը»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Քաղաքացիների 36 տոկոսից ավելին հրաժարվում է որեւէ դեպքում դուրս գալ փողոցային պայքարի:

Այս մասին պարզ է դառնում «GALLUP International Association» կազմակերպության անցկացրած վերջին հարցումներից, որն անցկացվել է 1100 մարդու շրջանակում՝ ապրիլի 22-25-ն ընկած ժամանակահատվածում:

Հարցին՝ որ դեպքում դուրս կգան փողոցային պայքարի հանուն իշխանափոխության, քաղաքացիները տվել են հետեւյալ պատասխանները՝ 23.4 տոկոսը պատասխանել է, որ եթե նոր տարածքներ հանձնվեն Ադրբեջանին, 22.5 տոկոսը պատասխանել է՝ պատերազմի նոր վտանգի դեպքում, 13.7 տոկոսը՝ ուժեղ եւ կամային լիդերի դեպքում, 10.4 տոկոսը՝ հստակ իշխանափոխության՝ հստակ օրակարգով, 4.5 տոկոսը՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացման դեպքում, 36.8 տոկոսը հայտարարել է, որ ոչ մի դեպքում դուրս չի գա պայքարի, 3 տոկոսն էլ դժվարացել է պատասխան տալ:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵՑ

Ազգային ժողովում՝ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի քննարկման ժամանակ, վեճ առաջացավ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանի միջեւ այն բանից հետո, երբ Հովհաննիսյանն ասաց, որ սահմանազատման առաջին շահառուն կիրանցին է, ոսկեպարցին, բաղանիսցին, բերքաբերցին, եւ որ որեւէ մեկը չի կարող խափանել մարդկանց անվտանգ ապրելու իրավունքը, ինչպես Լեռնային Ղարաբաղում արեցին եւ լուծարեցին ԼՂ-ն:

ՄԻՊ-Ը՝ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Լրագրողները ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին հարց ուղղեցին՝ այս օրերին Կիրանցում տեղի ունեցող դեպքերի մասին, ինչին ի պատասխան՝ ՄԻՊ-ը նշեց՝ այս պահին վերջնական գնահատական չի կարող տալ՝ կապված մարդկանց տեղաշարժի հետ:

«Որպեսզի կարողանամ տալ վերջնական գնահատական, պետք է հասկանամ, թե նրանց տեղաշարժը ինչ հիմքով է ընդհանրապես սահմանափակված: Որովհետեւ շատ հնարավոր է, եւ դա Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է իր դիրքորոշումներով հաստատել եւ մի շարք միջազգային չափանիշներով, որ լինեն մարդու իրավունքները սահմանափակելու հիմքեր, եւ նաեւ մարդու իրավունքների սահմանափակումը լինի համաչափ»,- ասաց Անահիտ Մանասյանը:

Հարցին՝ արդյոք ՄԻՊ-ը դիմե՞լ է պարզաբանում ստանալու համար, վերջինս դրական պատասխան տվեց. «Բնականաբար դիմել եմ, եւ երբ ստանամ, դրանից հետո հրապարակավ հանդես կգամ»:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ԵՆ ԲԵՐԵԼ ԿԻՐԱՆՑ

Կիրանցում ակցիա իրականացնող քաղաքացիները ճանապարհից հեռացրել են վրանները:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս մասին պատմում է քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը:

Քաղաքագետը նաեւ պատմեց, որ Կիրանց գյուղը երկու կողմից շարունակում է փակ մնալ, մեծ թվով ոստիկաններ են եկել ու շրջապատել մարդկանց.

«Որտեղից հնարավոր է՝ ոստիկաններ են բերել: «Կոլցո» օպերացիան են անում գյուղում, բայց մեծ թվով մարդիկ շարունակում են դրսում մնալ ու պայքարել»,-ArmLur.am-ի հետ զրույցում պատմում է քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը, որն այս օրերին գտնվում է Կիրանցում ու քաղաքացիների հետ միասին ակցիա է անում՝ պահանջելով դադարեցնել սահմանազատման ու սահմանագծման ապօրինի գործընթացը:

Հիշեցնենք, որ երեկ նաեւ ոստիկանները բռնի ուժով բերման էին ենթարկել ճանապարհը փակած քաղաքացիներին. «Բոլորին արդեն ազատ են արձակել. բայց բռնի ձեւով մարդկանց տարան, վայրագություններ արեցին նրանց նկատմամբ, բայց սպասելի էր այդ ամենը»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ԿԵՆՏՐՈՆԸ» ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ ՈՒՆԻ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի որոշմամբ Պետրոս Պետոյանը նշանակվել է Կենտրոն վարչական շրջանի ղեկավար, իսկ Սամվել Ղուկասյանը՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության պետի ժ/պ: Այս մասին տեղեկացնում է Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը:

Ավելի վաղ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանն ազատվել էր պաշտոնից:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը դեռ փետրվարի 9-ին էր գրել, որ Ղուկասյանը կազատվի պաշտոնից եւ կնշանակվի Երեւանի քաղաքապետարանի Քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության պետ:

ՆՈՐ ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ԻՍՐԱՅԵԼԻ ՎՐԱ

«Իրաքի իսլամական դիմադրությանը» պատկանող զինված շիա խմբավորումները կարճատեւ դադարից հետո հայտարարել են Իսրայելի տարածքի վրա նոր հարձակման մասին՝ առաջին անգամ հայտարարելով Իսրայելի հարավում գտնվող Նեգեւի Բեեր Շեւա քաղաքի վրա հարձակման մասին, ասվում է «Իրաքի իսլամական դիմադրությանն» Telegram ալիքի հաղորդագրության մեջ:

Կազմակերպությունը ավելացրել է, որ իրենք շարունակելու են գրոհել Իսրայելի հիմնական օբյեկտները՝ ի պատասխան Գազայի հատվածում ռազմական գործողությունների:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ

«ԳԶՎՌՏՈՑԸ» ՀԱՄՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆ

ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոստանտին Զատուլինը Говорит Москва ռադիոկայանի հետ զրույցում ասել է, որ ԱՄՆ-ն փորձում է Անդրկովկասը վերածել «Հակառուսական ցատկահարթակի»:

Զատուլինը նաեւ նշել է, որ դատելով հայ պաշտոնյաների պաշտոնական հայտարարություններից՝ Հայաստանը նույնպես փորձում են վերածել «հակառուսական ցատկահարթակի»:

Այս հարցերով ArmLur.am-ը կապ հաստատեց «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության նախագահ, քաղաքագետ Սուրեն Սուրենյանցի հետ, պարզելու համար, թե ինչ կարող են նշանակել այս հայտարարությունները եւ ինչպես կարող են ազդել Հայաստանի վրա:

Մեզ հետ զրույցում քաղաքագետը ասաց, որ առաջին անգամ չէ, որ ռուսական փորձագիտական կամ խորհրդարանական շրջանակներից նման հայտարարություններ են հնչո., իսկ հայտարարությունը հնչում է ԱԳՆ մակարդակով:

«Լավրովի վերջին հայտարարությունը առանձնապես դրանից չէր տարբերվում, որ Արեւմուտք-Ռուսաստան հակադրության պայմաններում կարող է նման ցանկություն Արեւմուտքը ունենալ, այսինքն՝ երկրորդ ճակատ բացել Ռուսաստանի դեմ կամ լարվածություն հարուցել. դա ակնհայտ է, ոչ մի նորություն չկա: Աշխարհի բոլոր կետերում հիմա Ռուսաստանն ու Արեւմուտքը միմյանց հետ հակադրության մեջ են, զրոյական հարաբերություններ ունեն, եւ մեկը մյուսի դիրքերը ուզում է թուլացնել կամ հակառակը՝ իր դիրքերը ուժեղացնել: Այս իմաստով, իհարկե, Զատուլինը նոր բան չի ասել: Անկախ նրանից շեշտադրումները նրա ինչ-պիսինն են՝ նոր բան չի ասել: Կարող ենք արձանագրել, որ այո, աշխարհաքաղաքական մրցակցություն կա մեր տարածաշրջանում, ցավոք սրտի, Փաշինյանի անհեռատես քաղաքականության հետեւանքով, աշխարհաքաղաքական այդ «գզվռտոցը» ուղիղ հասնում է Հայաստանի տարածք»,- ասաց քաղաքագետը:

Սուրենյանցը նաեւ նշեց, որ Արեւմուտքի համար գերխնդիրը ռուսական ազդեցության թուլացումն ու Իրանին մեկուսացնելը:

«Նրանք ոչ թե «ինչ-որ» Հարավային Կովկասի կամ այլ երկրի լավը կամ վատն են ուզում, այլ ձգտում են այնպիսի կոնֆիգուրացիայի ստեղծմանը, որ խնդիրներ ստեղծեն Ռուսաստանի Դաշնության եւ Իրանի Իսլամական Հանրապետության համար: Ես կարծում եմ՝ այստեղ մենք Արեւմուտքի մտադրությունների մասին չպետք է խոսենք, ոչ էլ ռուսների քաղաքականության. պետք է խոսենք մեր քաղաքականության մասին: Հայաստանի միակ ճիշտ մոտեցումը պետք է լիներ բալանսավորված քաղաքականությունը եւ մենք կկարողանայինք շատ արդյունավետ ու դրական հարաբերություններ ունենալ թե՛ Ռուսաստանի, թե՛ Արեւմուտքի հետ»,- ասաց Սուրենյանցը:

Քաղաքագետը հավելեց, որ ցավոք սրտի, Հայաստանի իշխանությունը գնացել է արկածախնդիր ճանապարհով՝ միակողմանիորեն ապավինելով Արեւմուտքի աջակցությանը, վատթարացնելով հարաբերությունները Ռուսաստանի հետ, ու սա այն դեպքում, երբ մենք Արեւմուտքից անվտանգային ռեալ երաշխիքներ չենք էլ ստացել ակնհայտորեն:

«Չեմ ուզում հիմա շատ ծանր տեսարաններ նկարագրել, բայց մենք ունենք պատմության մեջ նման դեպք 1918-20 թվականներին, 100-104 տարի առաջ. գրեթե բոլորս էլ գիտենք, թե նման արկածախնդրությունը ինչով է ավարտվում»,- ասաց քաղաքագետը՝ եզրափակելով զրույցը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՄԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ՝ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉ

Արցախի հերոս, «Եղնիկներ» զորամասի հրամանատար Կարեն Զալավյանը՝ Քյոխը, պատմել է 44-օրյա պատերազմի ընթացքի մասին, որոնց մասին չի խոսվել մինչ օրս:

Կարեն Զալավյանը պատմել է Արցախի պայթեցված կամուրջների, նահատակված հերոս զինվորների մասին:

Զալավյանը խոսել է նաեւ «Մարտական Եղբայրության» անդամ, ապրիլյան եւ 44-օրյա պատերազմների մասնակից Արման Պետրոսյանի մասին, ով ամեն բան պատվով էր անում:

«Արմանը խմբի տղաների հետ միասին իմ հանձնարարությամբ ցանկացած կետում, երբ իրավիճակը լարվում էր, ես վստահ էի, որ Արմանի գլխավորությամբ խնդիրները պատվով են իրականացնում», -ասել է Զալավյանը:

Նշենք, որ «Մարտական Եղբայրության» անդամ Արման Պետրոսյանին 1 ամսով կալանավորել են՝ խուլիգանության մեղադրանքով:

Այս առթիվ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչո՞ւ է հրամանատարը հիմա պատմում մանրամասներ:

«Ես այդ տեսանյութի մեջ առանձնապես ոչ մի ուշագրավ բան չեմ հանդիպել: Նայել եմ այդ տեսանյութը եւ, անկեղծ ասած, Արցախի այդ ռազմական գործիչների հուշերը քիչ են հետաքրքրում, առավել եւս իրենց այժմյան այս կեցվածքի պայմաններում: Իրենք իրենց գործը համարում են ավարտված, հիմա պետք է նստեն մեզ այդպիսի լեգենդներ պատմեն՝ իրենց ռազմական սխրանքների մասին: Արցախը հանձնել են թշնամուն ու եկել են, չէ՞, հիմա էլ ի՞նչ հեքիաթների մասին է խոսքը», - մեզ հետ զրույցում ասաց Ղազարյանը:

Նա նշեց նաեւ, որ իրեն շատ քիչ է հետաքրքրում, թե ինչ է ասել հրամանատարը եւ չի հասկանում, թե ինչո՞ւ է պատմում այդ պատմությունները:

«Եկել այդ պատմությունները պատմում է, որ ի՞նչ անենք, հայրենասիրությա՞մբ լցվենք: Հիմա ինքը, օրինակ, հերոսական հրամանատարի համբավ ուներ չէ՞, Արցախից հետո եկել է Երեւան, մի օր բարձրաձայնե՞լ է, թե այս դժբախտությունը այս ժողովրդի գլխին ով է բերել: Նիկոլ Փաշինյանի հասցեին մի խոսք լսե՞լ եք, որ նա ասի: Մարտական դիրքը թողել է, եկել է Երեւան պատմությունն՞ր է պատմում: Հետաքրքիր չէ ինձ իրենց այդ կեցվածքը»,- ասաց Ղազարյանը:

Էդգար Ղազարյանը նաեւ նշեց, որ Արցախից եկած մարդիկ նույնպես պահանջատեր չեն, քանի որ հաշիվ չեն պահանջում այն մարդկանցից, որոնք այս իրավիճակին են հասցրել:

«Այդքան ժամանակ է եկել են, ամբողջ արցախցիներով փախստականի կարգավիճակով ապրում են, մի հաշիվ չեն ուզում պահանջել այն մարդկանցից, որոնք դրել են իրենց այդ վիճակի մեջ: Տարիներով ծառայել են, հերոսական սխրանքներ են գործել, փառքի են արժանացել, պատվի են արժանացել, մեդալների են արժանացել, այդ ամենը իրենց համար արժեք չունի՞, ոչ ոքից իրենք հիմա բան չունե՞ն պահանջելու: Հիմա պետք է նստեն տեսախցիկների առաջ իրենց հիշողությունն՞ր պատմեն, որ մե՞նք էլ իրենց հիշողություններով ապրենք. անլուրջ է», - ասաց Ղազարյանը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԵՊՔԸ

Ավարտվել է Հնդկաստանի Հանրապետության մի խումբ քաղաքացիների կողմից Երեւան քաղաքի Հաստաբյան փողոցում կատարված խուլիգանության, նրանցից մեկի սպանության, եւս մեկի առողջությանը ծանր վնաս հասցնելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը՝ 2 անձի մասով:

2023 թ. հունիսի 19-ին ահազանգ էր ստացվել այն մասին, որ նշված հասցեում գործող բենզալցակայանի մոտ հնդիկ երիտասարդի դի կա՝ մեջքի շրջանում կտրած-ծակած վերքերով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում իրականացված քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ առերեւույթ հանցանքը կատարել է վերջինիս հայրենակիցը՝ Հնդկաստանի Հանրապետության մի խումբ քաղաքացիների միջեւ վիճաբանության ընթացքում:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով, ՀՀ-ում կացության հիմքով գտնվող Հնդկաստանի 28-ամյա քաղաքացին իր հայրենակիցներին այստեղ աշխատանքի տեղավորելու հարցի շուրջ հեռախոսազրույցներ է ունեցել Երեւանում գտնվող իր 2 այլ համերկրացիների հետ եւ այդ ընթացքում հնչած հայհոյանքների պատճառով մտադրվել է վերջիններիս նվաստացնել:

Այդ նպատակով, իր հետ հեռախոսազրույց ունեցած անձանցից մեկի՝ 30-ամյա հնդիկ երիտասարդի հետ պայմանավորվել է իբրեւ թե պարզաբանումներ ստանալու համար հանդիպել Հասրաթյան փողոցում գտնվող բենզալցակայանի մոտակայքում:

Դրանից հետո, նախապես հավաքելով Երեւանում գտնվող իր ծանոթ հայրենակիցներին, 28-ամյա երիտասարդը 2023 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 00:14-ի սահմաններում, նրանց հետ խմբով գնացել է նշված հասցե, որտեղ հանդիպելով իր 30-ամյա հայրենակցին ու նրա 2 ընկերներին՝ վերջիններիս արժանապատվությունը վիրավորելու նպատակով կատարել են առերեւույթ խուլիգանություն:

Մասնավորապես, 28-ամյա երիտասարդի կազմակերպմամբ՝ նրա 26-ամյա ընկերն ու քննությամբ ինքնությունները չպարզված մյուս անձինք, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բենզալցակայանի բնականոն աշխատանքը խոչընդոտելով, վիճաբանության են բռնվել հակառակ կողմի հետ, նրանց հասցեին հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ:

Այնուհետեւ, 28-ամյա հնդիկ երիտասարդի 26-ամյա ընկերը նախ ձեռքերով, ապա դանակով, իսկ նրանց խմբից ինքնությունը դեռեւս չպարզված մեկ այլ անձ՝ մահակով հարվածներ են հասցրել 30-ամյա տղամարդու ընկերոջը, նրան պատճառելով կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքներ:

Բացի այդ, հիշյալ 26-ամյա երիտասարդը հետապնդել է վիճաբանության ընթացքում դեպի բենզալցակայանի հետնամասը հեռացած 30-ամյա իր հայրենակցին, որտեղ նրան ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, իր մոտ գտնվող դանակով մարմնական վնասվածքներ է հասցրել վերջինիս, ինչի հետեւանքով տղամարդը մահացել է:

Դրանից հետո, խումբը՝ Հնդկաստանի 28-ամյա քաղաքացին, նրա 26-ամյա ընկերն ու ինքնությունները չպարզված մյուս անձինք դիմել են փախուստի:

Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիմա վրա՝ առերեւույթ խուլիգանությունը կազմակերպած 28-ամյա երիտասարդին ներկայացվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 46-297-րդ հոդվածի 3-րդ մասով, նրա 26-ամյա ընկերոջը՝ 155-րդ հոդվածի 1-ին մասով, 166-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 6-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Հիշյալ 2 մեղադրյալների մասով նախաքննությունն ավարտվել է: Նրանց վերաբերյալ քրեական վարույթի նյութերն ուղարկվել են դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու նպատակով: Իրականացվում են քննչական, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ առերեւույթ խուլիգանական արարքներում ներգրավված մյուս անձանց ինքնությունները պարզելու, նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

ԱԾՈՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏՆ ԱՋԱՏՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններեի համաձայն՝ Ազգային Ժողովում Պետահիրավական հանձնաժողովի նիստում, երբ Գլխավոր դատախազը տարեկան հաշվետվությունն է ներկայացրել, խիստ վրդովված ու զայրացած գնացել է դատախազություն ու հրահանգել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական եւ իրավական աղահովման վարչության պետ Արմեն Մարուխյանին ազատման դիմում գրի՝ «ասե՛ք ազատման դիմում գրի, հեռանա», -ասել է նա:

Արդյունքում՝ Մարուխյանին հեռացրել են: Իսկ ինչն է պատճառը: Բանն այն է, որ ԱԺ պետահիրավական հանձնաժողովի նիստի ժամանակ հարց բարձրացվեց Արմեն Աշոտյանի գործով, ինչին ի պատասխան, փաստաբաններն ահազանգեցին, որ Գլխավոր դատախազը հրապարակային անդրադառնալով Արմեն Աշոտյանի վերաբերյալ քրեական գործին թույլ է տվել զրպարտություն: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդման» մեջ նշված է, որ Արմեն Աշոտյանի վերաբերյալ քրեական գործով «պետությանը պատճառվել է 905.194.706 դրամի գույքային վնաս:Մեղադրյալի կողմից պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է»: Մեջբերված հատվածում գլխավոր դատախազը երկու անգամ խեղաթյուրել է իրականությունը, քանի որ դատարանի՝16.04.2024թ. որոշմամբ հաստատվել է, որ այս գործով պետությանը որեւէ վնաս չի պատճառվել, ո՛չ Արմեն Աշոտյանը եւ ո՛չ էլ որեւէ այլ մեղադրյալ որեւէ «վնաս» չի «վերականգնել», որովհետեւ պաշտպանության կողմը գործը համարում է շինծու եւ չի ընդունում մեղադրանքը: Հաշվի առնելով, որ՝

ա) հրապարակային ներկայացվել են այնպիսի փաստացի տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են Արմեն Աշոտյանի պատիվն ու արժանապատվությունը,

բ) վերոնշյալ հաղորդումը հրապարակված է դատախազության եւ ԱԺ պաշտոնական կայքերում, ինչպես նաեւ բանավոր ներկայացվել է Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆՔ բոլոր նշված հարթակներում հրապարակել վերոհիշյալ զրպարտության հերքում:

Եվ այս ամենն էլ պատճառ է դարձել, որ Գլխավոր դատախազի վարչության պետը պաշտոնից ազատվի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ՄԱՐՏԻ 1»

ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԵԼ Է

Մարտի 1-ի գործը ավարտված չէ. նոր փամփուշտներ կան, որոնք ուղարկված են փորձաքննության: Այս մասին Հանրային ՀԸ եթերում հայտնել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

Ըստ դատախազի՝ մարտի 1-ի գործում, մեկ առաջընթաց եւս կա: Նա հայտնեց, որ այս պահին ակնկալում են, որ Սահմանադրական դատարանը կքննարկի, եւ ի վերջո կպատասխանի այն հարցին, թե իրենք կարող են 3 բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ովքեր նախկինում 301 պրիմ հոդվածով էին մեղադրվել՝վերաորակել մեղադրանքը:

Հիշեցնենք, որ ՍԴ-ն արգելք էր դրել հետագայում այդ մեղադրանքը շարունակել:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի շուրջ կապ հաստատեց մարտի 1-ին կյանքից զրկվածներից մեկի հոր՝ Սարգիս Քլոյանի հետ:

Հարցին, թե ի՞նչ կարծիք ունի առաջընթացի եւ նոր փամփուշների մասին, նա պատասխանեց.

«Եթե անգամ բացվի, միեւնույն է՝ վաղեմության ժամկետը լրացել է: Եթե փորձագետը նույնպես բացահայտի, որ դա մարտի 1-ի ոստիկանների կամ բանակի կրակած փամփուշտներն են, գործը կկցվի հին գործի հետ:

Դա չի համարվում նոր, եթե համարվեր նոր՝ այդ ժամանակ վաղեմության ժամկետ չէր լինի: Ինչ էլ որ անեն, մարտի 1-ի վաղեմության ժամկետը լրացել է, բայց հանցանքը մնում է հանցանք:Հանցագործները քրեականով ազատված են, իսկ նյութականով ոչ»:

Ըստ Սարգիս Քլոյանի՝ մարտի 1-ի ամեն ինչն էլ բացահայտված է:

«Բացահայտված է, որ բանակից՝Ղարաբաղից, Երեւան են եկել զինվորները, դիպուկահարները, տանկերը, ավտոմատները, ատրճանակները:

Գիտենք, թե ովքեր են հրամանատարները եւ հրամանատարների օգնականները. դա նշանակում է, որ ամեն ինչն էլ բացահայտվել է»:

Սարգիս Քլոյանը նշում է, որ վերջերս կրակողները եկել եւ վաղեմության ժամկետից օգտվել են. կրակողների անունները եւ հոդվածները կան, բայց քանիոր վաղեմության ժամկետը լրացել է՝ մեր սահմանադրությունը թույլ չի տալիս, որ նրանք քրեական գործով դատապարտվեն:

Քլոյանը հավելում է, որ այստեղ կա միայն պատժելիության խնդիր: Ըստ նրա՝ մեղավորները այժմ կպատժվեն նյութականով:

Վաղեմության ժամկետի անցնելու պատճառը Քլոյանի կարծիքով՝ տվյալ ժամանակահատվածի ղեկավարությունն է եղել: Ըստ նրա՝այդ ժամանակվա քննչական խմբի ղեկավարը ոչ մի գործ չի արել եւ ստացել է գեներալի կոչում:

«Դրանք այն բոլոր պատճառներն են, ըստ որի 10 տարի շարունակ չբացահայտվեց մարտի 1-ը»,-եզրափակում է Սարգիս Քլոյանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 2-ից 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉՈ՞Ւ Է ՃՇԳՐՏՈՒՄ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ մարզպետ Հայկ Ղալումյանը մայիսի 2-ին որոշում է ընդունել Տավուշի մարզում իր ղեկավարությամբ մայիսի 22-ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքի դեպքում» թեմայով: Մարզպետը որոշել է ուսումնավարժությանը ներգրավել Տավուշի մարզի արտակարգ իրավիճակների եւ տարհանման հանձնաժողովներին, Տավուշի մարզպետի աշխատակազմի ղեկավար կազմին ու աշխատակիցներին, Իջեւան համայնքի վարչական ղեկավարներին, ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչությանը, ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը: Որոշման մեջ նշված չէ ուսումնավարժության անցկացման վայրը, սակայն դրան ներգրավել են Իջեւան համայնքի վարչական ղեկավարներին, ուստի այն Իջեւան համայնքում է անցկացվելու: Այս պայմաններում ուշագրավ է, որ մարզպետն իր որոշման կետերից մեկով մարզի տարհանման հանձնաժողովի նախագահին հանձնարարել է ճշգրտել Տավուշի մարզի տարհանման պլանը: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր մարզպետը ինչո՞ւ է ճշգրտում Տավուշի մարզից բնակչության տարհանման պլանը, եթե սողանքի թեմայով, լոկալ, Իջեւան համայնքում ուսումնավարժություն է անցկացնում:

ՏԱՐԱԾՔ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻՆ

Մայիսի 2-ին խորհրդարանում ելույթ ունենալով՝ ՔՊ-ական պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը ընդդիմադիրներին մեղադրել է Արցախը լուծարելու, ռուս խաղաղապահներին այնտեղից հանելու եւ Տավուշում նրանց համար տեղակայման նոր վայր փնտրելու համար: Հայաստանի անկախանալուց հետո Տավուշում ռուսական զինուժ տեղակայված չի եղել: 2020 թվականի պատերազմից հետո նրանց Տավուշ բերել, նրանց համար զորանոցների տարածք հատկացրել է Նիկոլ Փաշինյանի իշխանությունը: 2022թ հուլիսի 13-ին Նոյեմբերյան համայնքի ավագանին միաձայն, 14 կողմով որոշել է Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2 հեկտար հողամասը նվիրատվության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը: Նոյեմբերյան համայնքին այդ նվիրատվությունը կատարելու առաջարկով դիմել է ՀՀ կառավարությունը: Հենց այդ տարածքում է կառուցվել ռուսական զինուժի զորանոցը: Նմանապես Հայաստանի կառավարությունն է Բերդ համայնքի Այգեպար գյուղի տարածքում գտնվող խորհրդային շրջանում գործած փոքր օդանավակայանի տարածքը տրամադրել ռուսական զինուժի զորանոց կառուցելու նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ ՃԱՄԲԱՐ»

ԿԱՅԱՑԵԼ Է ՍՊԻՏԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Մարզերի երեխաների եւ դպատանիների համար իրականացվող «Եվրոպական ժառանգության օրերի ճամբար» ծրագիրը շարունակվում է: Բազմաբնույթ, հետաքրքիր կրթամշակութային այս ծրագիրը մայիսի 2-ին մեկնարկել է Լոռու մարզի Սպիտակի համայնքային գրադարանում:

Ծրագրի շրջանակում երեխաներին հյուրընկալվել են Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի աշխատակիցներն ու ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, նկարիչ, գոբելենի եւ բատիկի վարպետ, մանկավարժ Սոնա Բանոյանը:

Ճամբարի առաջին օրն անցկացվել է «Թռչուններ ասեղնագործող աղջիկը» հունական հեքիաթի համատեղ ընթերցումով: Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի աշխատակիցները զրույցների, քննարկումների միջոցով երեխաների հետ վերլուծել են գրական ստեղծագործության կերպարներին, բացահայտել՝ հեքիաթի խորհուրդը, խոսել՝ ուղերձների մասին:

Նկարչության վարպետության դասի ընթացքում Սոնա Բանոյանը երեխաներին ներկայացրել է նկարչական արվեստի հմտություններն ու գաղտնիքները: Դասընթացի շրջանակում երեխաները նկարել են դիմանկարներ՝ ոգեշնչման աղբյուր ընտրելով իտալացի նկարիչ Ա. Մոդիլյանիի եւ ֆրանսիացի նկարիչ Ֆ. Լեժեի հայտնի կտավները:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի աշխատակիցները երեխաներին ներկայացրել են նաեւ Եվրոպա աշխարհամասի, եվրոպական երկրների մշակութային ժառանգության մասին հետաքրքիր տեղեկություններ, սահիկաշարի միջոցով ցուցադրել պատմամշակութային եւ տեսարժան վայրերի մասին պատմող լուսանկարներ:

Նշենք, որ Սպիտակում «Եվրոպական ժառանգության օրերի ճամբար» ծրագիրը կանցկացվի երեք օր՝ մայիսի 2-4-ը: Սպիտակի համայնքային գրադարանի ընթերցողները կմասնակցեն նկարչության վարպետության դասերի, կընթերցեն եվրոպական մանկապատանեկան գրական ստեղծագործություններ: Կծանոթանան եվրոպական մշակույթի, արվեստի, հուշարձանների եւ ավանդույթների պատմությանը: Համատեղ կընթերցեն գրքեր, որոնց շուրջ ծավալված զրույցները, քննարկումներն ու վիկտորինաները կնպաստեն երեխաների գեղագիտական, քննադատական, վերլուծական մտքի զարգացմանը:

Հիշեցնենք, որ «Եվրոպական ժառանգության օրերի ճամբար» նախագիծը կազմակերպել է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը: Այն իրականացվում է Եվրոպայի խորհրդի «Եվրոպական ժառանգության պատմություններ» ծրագրում գրադարանի մրցանակի արժանացած «Հեքիաթի դեսպաններ» հեղինակային նախագծի շրջանակում:

Տեղեկացնենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համակարգմամբ Հայաստանում ավել քան 20 տարի անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը: Այս ծրագրի շրջանակում էլ իրականացվում է «Եվրոպական ժառանգության պատմություններ» նախագիծը:

Ծրագրի բացման արարողությունը տեղի է ունեցել 2024 թվականի մարտի 27-ին՝ Սպիտակի համայնքային գրադարանում:

ԼՈՒՐԵՐ

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՓՈԹՈՐԻԿԸ ԱԶԴԵԼ Է

Մագնիսական փոթորիկը Երկրի վրա ազդել է մայիսի 3-ի կանխատեսված ամսաթվից շուտ, ՏԱՍՍ-ին հայտնել են Կիրառական երկրաֆիզիկայի ինստիտուտի (IPG) տիեզերական եղանակի մոնիթորինգի կենտրոնում:

Մոնիթորինգի տվյալների համաձայն՝ Երկրի մագնիսական դաշտի խանգարումն այժմ հասել է G2 մակարդակի, ինչը մոնիթորինգի սանդղակի վրա նշանակում է «չափավոր» ցուցիչ, այնտեղ G5-ը «չափազանց ուժեղ» է, իսկ G1-ը՝ «թույլ»:

Նախկինում գիտնականները գրանցել էին հզոր բռնկումներ, որոնք տեղի են ունեցել Արեգակի վրա ապրիլի 30-ին եւ մայիսի 1-ին: Գիտնականները մայիսի 3-ի համար էին կանխատեսել Երկրի մագնիսական դաշտի խախտման հավանականությունը:

ՊԵՏՔ Է ԲԱՑԱՌԵԼ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը շրջաբերական գրությամբ դիմել է Երեւանի քաղաքապետարանին եւ ՀՀ մարզպետարաններին՝ առաջարկելով հանձնարարել իրենց ենթակա հանրակրթական դպրոցներին մայիսի 24-ին եւ 25-ին ավարտական դասարաններում կազմակերպվող «Վերջին դաս» միջոցառման շրջանակում զերծ մնալ դրամահավաքից: Գրության մեջ, մասնավորապես, նշվում է. «Ուսումնական տարվա ավարտով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում «Վերջին դաս» միջոցառումը կազմակերպելիս անհրաժեշտ է բացառել որեւէ դրամահավաք»: Նույնաբովանդակ գրություն է ուղարկվել նաեւ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների եւ ոչ պետական դպրոցների տնօրեններին: Նախարարությունը վերջին շրջանում ահազանգեր է ստանում հանրակրթական ուսումնական հաստատություններում «Վերջին դաս» միջոցառման համար իրականացվող դրամահավաքության վերաբերյալ: Նախարարությունը շրջանավարտների ծնողներին եւ ուսուցիչներին կոչ է անում՝ զերծ մնալ ավելորդ ճոխություններից եւ «Վերջին դասի» միջոցառումը դիտարկել բացառապես որպես ուսումնական գործընթացի ամփոփում՝ հավատարիմ մնալով կրթության բովանդակությանը:

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Մամուլի եւ լրագրողական գործունեության ազատությունը ժողովրդավարության հիմնասյուներից է:

Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը՝ ընդգծելով, որ Կառավարության որդեգրած քաղաքականությունն է՝ անել առավելագույնը ոլորտի զարգացման եւ ամրապնդման համար:

«Շնորհավորում եմ ազատ մամուլի բոլոր ջատագովներին:

Ուրախ եմ տեղեկացնել՝ «Մամուլի ազատության ինդեքս» 2024-ում ՀՀ-ն բարելավել է իր դիրքերն ու հայտնվել 43-րդ հորիզոնականում:

Նախորդ տարի Հայաստանը զբաղեցնում էր 49-րդ հորիզոնականը:

Ինդեքս, որը գնահատում է լրագրողների աշխատանքային պայմանները աշխարհի շուրջ 180 երկրներում:

«Մամուլի ազատության ինդեքսում» հարեւան Վրաստանը՝ 103-րդ, Ադրբեջանը՝ 164-րդ, Թուրքիան՝ 158-րդ, իսկ Իրանը՝ 176-րդ հորիզոնականում են»,- նշված է գրառման մեջ:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՄԵՑՎԵԼ

«Ֆիշեռ» ՍՊԸ-ին պատկանող ձկնամթերքի արտադրամասում իրականացված վերահսկողության ընթացքում ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչներն արձանագրել են սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ (ք. Երեւան):

Պարզվել է, որ արտադրամասի փաթեթավորման սենյակում եւ սառնարանային հատվածում պատերի մակերեւույթները պատրաստված չեն անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից, իսկ առաստաղները չեն կանխարգելում կեղտի կուտակումը, խոնավության խտացման եւ մասնիկների թափվելու հնարավությունը:

Ձկնամթերքի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, տրվել է ժամանակ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը հավանություն է տվել «ՀՀ հարկային օրենսգրքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերին: Օրինագծերի ընդունման անհրաժեշտությունը բխում է շրջանառության հարկի համակարգի եւ հարկման ընդհանուր համակարգի հարկային բեռերի միջեւ տարբերության կրճատման, տնտեսավարող սուբյեկտների կողմից կատարվող ծախսերի փաստաթղթավորման խթանները մեծացնելու, ինչպես նաեւ ՓՄՁ համար նախատեսված երկու հարկման համակարգերն ավելի հասցեական դարձնելու նպատակադրումներից: Նախագծերով առաջարկվում է վերանայել գործունեության հիմնական տեսակների համար սահմանված շրջանառության հարկի դրույքաչափերը՝ միաժամանակ ընձեռելով փաստաթղթերով հիմնավորված ծախսերի միջոցով վճարման ենթակա հարկի նվազեցման հնարավորություն:

Ինչպես նշել է Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շրջանառության հարկի համակարգը հարկման ընդհանուր համակարգին այլընտրանքային համակարգ լինելու փոխարեն վերածվել է հարկման արտոնյալ համակարգի:

Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքով առաջարկվում է վերանայել շրջանառության հարկի դրույքաչափերը եւ կրճատել հարկման համակարգերի միջեւ հարկային բեռի տարբերությունը. մասնավորապես՝ գործունեության հիմնական տեսակների մասով բարձրացնել շրջանառության հարկի ներկայումս գործող դրույքաչափերը՝ հիմնականում կրկնակի չափով: Փաստաթղթերով հիմնավորված ծախսերի հիման վրա շրջանառության հարկի գումարի նվազեցման հնարավորություն նախատեսել նաեւ արտադրության եւ ծառայությունների մատուցման ոլորտների համար, որը հիմա նախատեսված չէ:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱԹԵԹ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծերի փաթեթի ընդունման հիմքում դրված են կառավարության ծրագրով նախանշված հետեւյալ նպատակները. շրջանառության հարկի դրույքաչափերի բարձրացմամբ շրջանառության հարկի համակարգի եւ հարկման ընդհանուր համակարգի (ԱԱՀ-ի համակարգի) շրջանակներում ձեւավորվող հարկային բեռերի տարբերության կրճատում, շրջանառության հարկ վճարողների ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու տնտեսական խթանների ձեւավորում, գործարքների փաստաթղթավորման մշակույթի ամրապնդում, գործունեության որոշ տեսակների դուրս բերում միկրոձեռնարկատիրության եւ շրջանառության հարկի արտոնյալ համակարգերից՝ դրանով իսկ այդ համակարգերը դարձնելով ավելի հասցեական:

Շրջանառության հարկի դրույքաչափերի բարձրացման եւ փաստաթղթավորման խթանների վերաբերյալ առաջարկվում է՝ գործունեության հիմնական տեսակների մասով բարձրացնել (հիմնականում՝ կրկնակի չափով) շրջանառության հարկի՝ ներկայումս գործող դրույքաչափերը, ընդլայնել փաստաթղթերով հիմնավորված ծախսերի հիման վրա շրջանառության հարկի գումարի նվազեցման հնարավորությունների շրջանակը՝ այն նախատեսելով նաեւ արտադրության եւ ծառայությունների ոլորտների համար (ներկայումս այդ հնարավորությունն առկա է միայն առեւտրի եւ հանրային սննդի կազմակերպման ոլորտների համար), հնարավորություն ստեղծել, որպեսզի ձեռքբերումների փաստաթղթավորման բարձր մակարդակ ապահովող հարկ վճարողների համար շրջանառության հարկի վերջնական (արդյունավետ) դրույքաչափը գործնականում լինի ավելի ցածր, քան գործող դրույքաչափերն են:

Գործունեության տեսակների վերաբերյալ առաջարկվում է սահմանել, որ 2025թ. հունվարի 1-ից՝ փաստաբանական եւ նոտարական գործունեության տեսակները չեն կարող իրականացվել շրջանառության հարկի համակարգում (պետք է տեղափոխվեն ԱԱՀ-ի համակարգ), հետեւյալ գործունեության տեսակները չեն կարող իրականացվել միկրոձեռնարկատիրության համակարգում (պետք է տեղափոխվեն շրջանառության հարկի կամ ԱԱՀ-ի համակարգ).

մարզերում առեւտրական (առք ու վաճառքի) գործունեությունը,

վարսավիրական, մարմնի խնամքի ծառայությունների մատուցումը,

սաունաների, բաղնիքների եւ շոգեբաղնիքների կազմակերպման գործունեությունը,

ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ նորոգման ծառայությունների մատուցումը,

միջնորդական այդ թվում՝ անշարժ գույքի առքուվաճառքի եւ (կամ) վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման տրամադրման գործունեությունը,

ծրագրային ապահովման մշակման գործունեությունը,

փորձաքննական ծառայությունների մատուցումը,

շինարարական աշխատանքների կատարումը, ճարտարապետական նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացումը, անշարժ գույքի գնահատման եւ չափագրման գործունեության իրականացումը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ՉԵՆ ԱՇԽԱՏԵԼ

Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերում POS տերմինալների կիրառման արդյունքում նախկինում զրոյական գործարքներ գրանցած հարկ վճարողների մոտ իրականացվել է հարկային վարչարարություն: Ստուգում է իրականացվել 1038 հարկ վճարողի մոտ, որի արդյունքում վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարման ընդունման հնարավորություն չի ապահովել 545 հարկ վճարող եւ արձանագրված խախտումը կազմել է 169.3 մլն դրամ:

Կոմիտեն հիշեցնում է, որ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող հարկ վճարողները, «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, պարտադիր պետք է ապահովեն վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարման ընդունման հնարավորություն: Միաժամանակ հիշեցնում ենք, որ կենսաթոշակառուներն ու նպաստառուները ՀՀ տարածքում գործող առեւտրի կետերում ու ծառայություններ մատուցող կազմակերպություններում անկանխիկ գործարքներ կատարելու դեպքում ստանում են հետվճար՝ կատարած գործարքների հանրագումարի 10%-ի չափով, բայց ոչ ավելի քան 5 000 դրամը:

«ՖԱՍԹ ԲԱՆԿՆ» ԱՋԱԿՑՈՒՄ Է

Ազգային մշակութային ժառանգության եւ ավանդույթների պահպանման նպատակով «Ֆասթ բանկն» աջակցում է «Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին եւ վերջինիս ելույթների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած համերգի հանրայնացման նպատակով, Ֆասթ Բանկը 6 մլն դրամ է նվիրաբերել ՊՈԱԿ-ին:

Հայկական ժողովրդական արվեստը ներկայացնող երաժշտական եւ պարային խմբերի՝ «Ալթունյան» պետական անսամբլի, Հայաստանի պարի պետական անսամբլի, Հայաստանի ազգային նվագարանների, «Բարեկամություն» պետական անսամբլի, «Ակունք» ազգագրական համույթի եւ «Գուսան» պետական անսամբլի միավորման արդյունքում ձեւավորված ՊՈԱԿ-ի հիմնական եւ կարեւոր նպատակն է ժողովրդական երաժշտության, պարարվեստի ոլորտներում միասնական մշակութային գործունեության իրականացումը, մասնավորապես՝ կատարողական արվեստի ավանդույթների պահպանումն ու զարգացումը, հասարակության հոգեւոր պահանջների ձեւավորումն ու բավարարումը, գեղարվեստական բարձրարժեք արդյունքի ապահովումը, միջազգայնացումը, հանրային վարկանիշի բարձրացումը, մշակութային հանրությանը հաղորդակից դարձնելը հայկական ժողովրդական արվեստին:

««Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը թեեւ մեկ տարի է, ինչ կազմավորվել է, սակայն այս կարճ ընթացքում հասցրել ենք տասնյակ համերգների մասնակցել, հանդես գալ նաեւ Հայաստանի սահմաններից դուրս: Մեր գլխավոր նպատակը հայկական մշակույթի պահպանումն է եւ շատ ուրախ ենք, որ այս գործում մեր կողքին է Ֆասթ Բանկը: Բանկի աջակցությամբ հանրայնացրել ենք մեր խմբերի մի շարք ելույթներ, որոնց թվում նաեւ Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած մեր համերգները: Այսպիսով՝ մեր կատարումները վայելելու հնարավորություն ենք տվել նաեւ նրանց, ովքեր ֆիզիկապես ներկա չեն գտնվել մեր ելույթներին», - նշել է կենտրոնի ղեկավար Արմեն Սարգսյանը:

«Ֆասթ բանկի» կողմից կրթական, սոցիալական եւ մշակութային նախագծերին աջակցությունը պարբերական բնույթ է կրում եւ Ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր մաս է:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ «7 ՕՐ, 7 ԳԻՇԵՐ» ՖԻԼՄԸ

Միջազգային՝ «7 օր, 7 գիշեր» ֆիլմը կներկայացվի հայաստանյան հանդիսատեսին: Մայիսի 16-ին տեղի կունենա հայկական կոլորիտով ընտանեկան կատակերգության հայաստանյան պրեմիերան: «7 օր, 7 գիշեր»-ը պարզապես հերթական ֆիլմը չէ, այն ներկայացնում է հայկական հարսանիքի ավանդույթը եւ հայկական մշակույթն արտահանում է այլ երկրներ:

Ֆիլմի հերոսներից Հովհաննեսը հանրահայտ ազգագրագետ է, ում կյանքի ողջ նպատակը հայկական ազգային մշակույթի տարածումն ու պահպանումն է: Երկարամյա աշխատանքի արդյունքում նրան ի վերջո հանջողվում է Հայաստան հրավիրել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագետներին՝ 7 օր եւ 7 գիշեր տեւող հայկական ավանդական հարսանիքը, որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգություն գրանցելու համար, սակայն հենց առաջին օրը Հովհաննեսը լուրջ վնասվածք է ստանում, իր օգնականի անփութության ու մի ռուս ընտանիքի պատճառով, ում նա եղբոր խնդրանքով պետք է օդանավակայանից հասցներ հյուրանոց: Այժմ նրա գործը պիտի ավարտին հասցնի ռուս ընտանիքը, սակայն ընտանիքում առկա մթնոլորտը՝ ամուսինները կանգնած են ամուսնալուծության եզրին, Հովհաննեսի անլուրջ օգնականն ու հարսանեկան ծեսերը ներկայացնող թատերախմբի ներքին անհամաձայնությունները ամեն բան վեր են ածում իսկական քաոսի:

««7 օր, 7 գիշեր»-ը ֆիլմում ներկայացված է գեղեցիկ ընտանեկան սիրո պատմություն: Առկա է շատ բարի հումոր. այն ընտանեկան դիտման կինոնկար է: Ֆիլմում առկա տեսարանները նույնպես շատ գեղեցիկ են, այն նկարահանվել է Հայաստանում, եւ արտացոլում է մեր երկրի գեղեցիկ բնապատկերները: Ֆիլմի նպատակն է հայաստանյան եւ միջազգային հանրությանը եւս մեկ անգամ ներկայացնել հայկական ավանդական հարսանիքը՝ իր գեղեցիկ տարրերով: Սա հերթական կատակերգությունը չէ: Այս ֆիլմը յուրատեսակ ձեւով հանրահռչակելու է հայկական մշակույթը տարբեր երկրներում: Մենք հույս ունենք, որ ֆիլմի շնորհիվ 7 օր, 7 գիշեր հարսանիքի կոնցեպտը կվերականգնվի մեզանում եւ տարածում կստանա»,- նշում են ֆիլմի հեղինակները՝ փաստելով, որ «7 օր, 7 գիշեր»-ի շուրջ համախմբված են եղել լավագույն մասնագետները:

Բեմադրող ռեժիսոր՝ Հայկ Կբեյան, բեմադրող օպերատոր՝ Արթուր Ուստյան: Պրոդյուսերներ՝Սարիկ Անդրեասյան, Ղեւոնդ Անդրեասյան, Տիգրան Համբարձումյան, Գեորգի Շաբանով: Սցենարը՝Նարեկ Ավագյանի: Կոմպոզիտոր՝ Վահե Գրիգորյան: Դերերում՝Ջոյա Բերբեր, Սերգեյ Մարին, Արման Նավասարդյան, Արմեն Մարգարյան, Լեւոն Հարությունյան, Սոֆիա Պետրովա, Եգոր Նիկոլենկո, Ալինա Բարկալովա, Յուլիա Շարովա: Ֆիլմի պաշտոնական սաունդթրեքի հեղինակը Hayat Project-ն է:

Նշենք նաեւ, որ Հայաստանյան պրեմիերայի հետ զուգահեռ ֆիլմը կներկայացվի նաեւ մի շարք ԱՊՀ երկրներում:

ՀԱՄԵՐԳ

«ԷԹՆՈ ՋԱԶ»-Ը՝ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Մայիսի 2-ին Արամ Խաչատրյան համերգասրահում «Նյու Ջեներեյշն Փրոջեքթի» նախաձեռնությամբ կայացավ «Էթնո ջազ» խորագրով յուրահատուկ համերգը՝ նվիրված Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանին: Շվեյցարական Authentic Light Orchestra-ն /երաժշտական ղեկավար՝ Վալերի Տոլստով/ հանդիսատեսին ներկայացավ հայկական էթնո ջազի ամենայուրահատուկ մշակումներով:

Խմբի կազմում ներգրավված են երաժիշտներ, որոնք շրջագայել են ամբողջ աշխարհը եւ հանդես եկել հեղինակավոր դահլիճներում:

Համերգի հատուկ հյուրերն էին Գոռ Սուջյանը, Հասմիկ Բաղդասարյանը եւ Միքայել Ոսկանյանը:

Հավելենք, որ համերգին մասնակցում էին նաեւ Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցի սաները, խմբավար՝Էմմա Առաքելյանի ղեկավարությամբ:

Authentic Light Orchestra-ն հիմնադրվել է հայկական արմատներով շվեյցարացի մուլտի-ինստրումենտալիստ Վալերի Տոլստովի կողմից 2009 թվականին՝ նպատակ ունենալով համատեղել տարբեր երաժշտական ժանրեր, ինչպիսիք են ջազը, համաշխարհային, կինոերաժշտությունը, հայկական ժողովրդական եւ դասական երաժշտության տարրերը: 2016 թվականին խումբը Սերժ Թանկյանի հետ ձայնագրել են հոլիվուդյան The Promise ֆիլմի սաունդթրեքը: Սաունդթրեքը ձայնագրվել է Authentic Light Orchestra-ի եւ String Orchestra-ի հետ Մոսկվայում, Mosfilm-ի ստուդիայում:

Խմբի մենակատարներն են Վալերի Տոլստովը (Շվեյցարիա /ֆլեյտա, երգեհոն), Եվգենի Լեբեդեւ (ՌԴ /դաշնամուր), Անտոն Ռեւնուկը (ՌԴ /բաս, կոնտրաբաս), Արման Մնացականյանը (հարվածային գործիքներ), Միքայել Ոսկանյանը (թառ), Գրիգոր Ասրունց-Քարտաշյանը (դուդուկ, բլուլ, զուռնա), Հայկ Գրիգորյան (շեփոր), Աստղիկ Վարդանյան (առաջին ջութակ), Գոհար Պապոյանը (երկրորդ ջութակ), Աստղիկ Գաժոյանը (ջութակ), Արտյոմ Մանուկյանը (թավջութակ):Համերգի կայացմանը աջակցել են՝ «Ռիո մոլ» առեւտրաժամանցային կենտրոնը, «Տաշիր սթրիթ» առեւտրի կենտրոնը, «Սիրուն սքին-բարը» եւ «Գաթա» պանդոկը:

Շարունակելով հոբելյանական համերգների շարքը «Նյու Ջեներեյշն Փրոջեքթը» հունիսի 8-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կներկայացնի «Շառլ Ազնավուր 100» խորագրով համերգը՝նվիրված մեծն շանսոնյե Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանին:

ԼՈՒՐԵՐ

ՖԻԼՄ «ՎԵՐԱ»

Ռեժիսոր Հովհաննես Գալստյանի «Վերա» ֆիլմի դերասանների ընտրությունները գրեթե ավարտված են:

Հիշեցնենք, որ ֆիլմը պատմում է արցախցի մի կնոջ կյանքի մասին, ով Արցախի պաշարման օրերին ոտքով երկար ճանապարհ է կտրել՝ ձեթ եւ շաքարավազ գտնելու նպատակով, որպեսզի կարողանա իր երեխաներին սնունդով ապահովել, այդ իսկ պատճառով ֆիլմում նկարահանվելու համար հրավիրում էին նաեւ արցախցիների:

Նշենք, որ «Վերա»-յի նկարահանումները նախատեսված են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, սակայն մայիսի վերջին լինելու են փորձնական նկարահանումներ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱԼՔԻՄԻԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ՝ 9-ՐԴ ԴԱՐԻ ՏԱՐԱՆԵՐ

9-րդ դարին թվագրվող եւ ալքիմիային վերաբերող տարաների խումբը հայտնաբերվել է Դվինի տարածքում՝տարբեր տարիներին արված պեղումների արդյունքում: Այն ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում ալքիմիայի զարգացումը հնարավորություն է տվել մասնագետներին բյուրեղացնել եւ ստանալ քիմիական տարբեր նյութեր:

Հայաստանի պատմության թանգարանի հնագիտության եւ դրամագիտության բաժնի գիտաշխատող-ֆոնդապահ Համազասպ Աբրահամյանը նշում է, որ միջնադարյան Հայաստանում ալքիմիան հնարավորություն էր տալիս մասնագետներին բյուրեղացնել, գոլորշիացնել, նստեցնել եւ ստանալ տարբեր քիմիական նյութեր:

«Հնագիտական աշխատանքների արդյունքում հայտնաբերել ենք ալքիմիային վերաբերվող բազմաթիվ առարկաներ, որոնց մասին նկարագրություններ կան միջնադարյան բազմաթիվ ձեռագրերում»: Գիտաշխատողը նաեւ պատմեց՝ շատ հետաքրքիր է սնդկամանի պատրաստման տեխնոլոգիան, որը նկարագրված է ձեռագրերում, որտեղ ներկայացվում է մոմի կաղապարի միջոցով պատրաստման եղանակը: Ըստ նկարագրության՝ վերցրել են ընկույզի չափ մոմը, վրան դրել մախաթասեղ ու այդ ամենը պատել են հրակայուն կավով, ինչի արդյունքում ստացել են փոքր ներսույթով, հաստ պատերով եւ ասեղի բարակության իրանով մի առարկա, որ հնարավորություն է տվել հերմետիկ պահել զանազան նյութեր:

ԱՊՐԵԼՈՒ ՁԱՅՆԸ ՀՆՉԵԼՈՒ Է ՄԻՇՏ

Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի նախաձեռնությամբ կայացել է եւս միջոցառում: Գրական երեկոն նվիրված է եղել Արցախի բարբառին, որի ընթացքում «Դիզակ Արտ» մշակութային կենտրոնի սաները հանդես եկան արցախյան բարբառով գրված մի շարք երգերով:

Արցախի գրողներից ընթերցվել են Գուրգեն Գաբրիելյանի, Վարդան Հակոբյանի, Վազգեն Օվյանի, Ալեքսանդր Մանասյանի, Արիս Գրիգորյանի, ինչպես նաեւ՝ երիտասարդ գրող Վաչիկ Դադայանի ստեղծագործություններից:

Երեկոն վարել է Համազգայինի Արցախի գրասենյակի պատասխանատու Հերմինե Ավագյանը:

Արցախի բարբառը, որպես ոսկեղենիկ մայրենիի մի ճյուղ, ունի իր առանձնահատկությունները, որին անդրադարձել է երիտասարդ բարբառագետ Ռենա Մովսիսյանը:

Ելույթով հանդես են եկել «Դիզակ Արտ» կենտրոնի հիմնադիր Երազիկ Ավանեսյանը, գրականագետ Նոնա Դավթյանը, հրապարակախոս, թարգմանիչ Միքայել Հաջյանը, Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ռուզան Գասպարյանը:

Ընթերցվել են հատվածներ Արցախի բանահյուսությունից, որի շուրջ կազմակերպվել է հետաքրքրաշարժ հարցուպատասխան:

Ներկաները անդրադարձել են Արցախի սովորույթներին, օրհնանքներին, տարածված շրջասույթներին, կիսվել իրենց տպավորություններով: Երեկոյի ընթացքում ելույթ է ունեցել նաեւ երգիչ Արթուր Խաչենցը՝ Արցախի բարբառով գրված երգերով: Համազգայինի Արցախի գրասենյակի պատասխանատու Հերմինե Ավագյանը խոստացել է, որ «Ապրելու ձայնը» նախագիծը շարունակական է լինելու՝ Համազգայինի շուրջը համախմբելով Արցախի գրողներին ու արվեստագետներին:

● *Մայիսի 4-ին՝ժամը 15:00-ին, Պատանի հանդիսատեսի թատրոնում կցուցադրվի «Ջրահարսը» մանկական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակը վճարվել լիազորագրով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչ ժամկետում է վճարվում չվճարված կենսաթոշակի գումարը:

Արուսյակ Հովակիմյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ կենսաթոշակը վճարվում է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքում, նաեւ այդ պետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով: Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակառուն ներակայացրել է տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե գործուղման դեպքում գիշերավարձի գումարը փաստաթղթով հիմնավորված չէ, ապա տվյալ գումարը ենթակա՞ է նվազեցման գործուղման մեկնած ֆիզիկական անձի համախառն եկամտից:

Լիաննա Իսրայելյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետի եւ 16 ապրիլի 2001թ. N 02/456 հրամանի 12.2.-ի համաձայն՝ փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ չափերով տրվող փոխհատուցումները, մասնավորապես՝ գործուղման վճարները:
Համախառն եկամտից նվազեցվում են ՀՀ տարածքում եւ ԼՂՀ գործուղվելու դեպքում ոչ պետական եւ ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար ՀՀ կառավարության 29.12. 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի եւ ճանապարհածախսի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող գիշերավարձի եւ ճանապարհածախսի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա գործուղումների դեպքում գիշերավարձի փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը փոխհատուցվում են նշված որոշմամբ տվյալ երկրի համար սահմանված գիշերավարձի նվազագույն նորմայի 70% սահմաններում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Քաղաքացիները համացանցային տիրույթում եւս սկսել են պայքարը. #եսհաշտչեմ հեշթեգով եւ սահմանազատման նոր քարտեզով նրանք ընդվզում են կատարվող միակողմանի զիջումների դեմ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	+6 +10 +12 +15
	Կոտայքի լեռներ	+6 +9 +12 +14
	Կոտայքի նախալեռներ	+11 +13 +14 +16
	Գեղարքունիք	+4 +8 +9 +11
	Լոռի	+6 +10 +12 +14
	Տավուշ	+10 +15 +13 +16
	Արագածոտնի լեռներ	+6 +8 +11 +13
	Արագածոտնի նախալեռներ	+10 +14 +14 +18

	Արարատ	+13 +15 +18 +20
	Արմավիր	+11 +13 +18 +20
	Վայոց ձորի լեռներ	+7 +9 +12 +14
	Վայոց ձորի նախալեռներ	+12 +14 +17 +20
	Սյունիքի հովիտներ	+13 +16 +18 +20
	Սյունիքի նախալեռներ	+8 +12 +14 +17
	ԼՂՀ	+9 +11 +13 +16
	Երեւան	+15 +18 +20 +22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*